ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2024 թվականի N 1583 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2346-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման մասին» N 2346-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ և որոշմամբ հաստատված հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 3-րդ կետում՝

ա. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) տեխնիկական պահանջները՝ համաձայն N 4.1 հավելվածի՝ անգլերեն, N 4.2 հավելվածի՝ հայերեն, N 4.3 հավելվածի՝ ռուսերեն.»,

բ. 6-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ ենթակետով.

«7) ծրագրի՝ առաջարկի հարցման փուլի հիմնական պայմանները՝ համաձայն N 7.1 հավելվածի՝ անգլերեն, N 7.2 հավելվածի՝ հայերեն, N 7.3 հավելվածի՝ ռուսերեն:»:

2. Որոշմամբ հաստատված N 2.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Որոշմամբ հաստատված N 2.2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Որոշմամբ հաստատված N 2.3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 3 հավելվածի:

5. Որոշմամբ հաստատված N 4.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 4 հավելվածի:

6. Որոշմամբ հաստատված N 4.2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 5 հավելվածի:

7. Որոշմամբ հաստատված N 4.3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 6 հավելվածի:

8. Որոշմամբ հաստատված N 6.1 հավելվածում «Leonid Avetisyan» բառերը փոխարինել «Arman Khachatryan» բառերով, իսկ «Director of “EKENG” Closed Joint-Stock Company (by consent)» բառերը՝ «Acting Director of “EKENG” Closed Joint-Stock Company (by consent)» բառերով:

9. Որոշմամբ հաստատված N 6.2 հավելվածում «Լեոնիդ Ավետիսյան» բառերը փոխարինել «Արման Խաչատրյան» բառերով, իսկ «ԷԿԵՆԳ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն (համաձայնությամբ)» բառերը՝ «ԷԿԵՆԳ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (համաձայնությամբ)» բառերով:

10. Որոշմամբ հաստատված N 6.3 հավելվածում «Леонид Аветисян» բառերը փոխարինել «Арман Хачатрян» բառերով, իսկ «Директор ЗАО “ЭКЕНГ” (по согласию)» բառերը՝ «Временно исполняющий обязанности Директора ЗАО “ЭКЕНГ” (по согласию)» բառերով:

11. Որոշումը լրացնել NN 7.1, 7.2 և 7.3 հավելվածներով՝ համաձայն համապատասխանաբար NN 7, 8 և 9 հավելվածների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

08.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ